ՄՈԼԴԱՎԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ XVI—XVII ԴԴ.

Ե. Մ. ՊՈԴԳՐԱԴՍԿԱՅԱ (Քիշինև)

XVI—XVII դդ. Մոլդավիան շարունակում էր առևտրական կապեր պահպանել հարևան պետությունների հետ՝ իրրև գյուղատնտեսական և արդյունագործական արտադրանքի խոշոր մատակարարող։ Նշված ժամանակաշրջանում ընդլայնվում են երկրի առևտրական կապերը Լվով քաղաքի և Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ մտնող արևմտաուկրաինական մյուս կենտրոնների հետ։ Այս ուղղությամբ կատարվող մշտական ապրանքափոխանակության հիմքը աշխատանքի հասարակական բաժանումն էր մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ արտադրող Մոլդավիայի և զանազան արհեստագործական իրեր արտադրող արևմտաուկրաինական քաղաքների միջև։

Մոլդավիայից Լվովի շուկա ներմուծվող ապրանքների մեջ կարևոր տեղ էին գրավում հայտնի «վալախյան ցուլերը», գինին, մեղրը, մեղրամոմը, ընկույզը, ծխախոտը, ինչպես նաև պոտաշը, կաշիները և սեկը (սաֆյան)։ Լվովից և արևմտաուկրաինական մյուս քաղաքներից քննարկվող ժամանակաշրջանում Մոլդավիա էին արտահանվում մետաղներ (կապար, պղինձ, երկաթե թիթեղներ, ոսկի, արծաթ), գերանդիներ, կաշիներ, մեխեր, ինչպես նաև մահուդ, կտավ, մետաքսե և բամբակե գործվածքներ, գլխարկներ, ապակյա, հախճապակյա և ոսկերչական զանազան իրեր և այլն։

Իր որոշակի նշանակությունը պահպանում էր նաև Մոլդավիայի միջոցով կատարվող տարանցիկ առևտուրը, որի շնորհիվ արևմտաուկրաինական մարդերը կապվում էին Արևելքի, գլխավորապես Կոստանդնուպոլսի հետ։

Մոլդավիայի և արևմտաուկրաինական քաղաքների միջև կատարվող առևտրական փոխանակության մեջ, որը նպաստում էր երկու երկրների տնտեսության զարգացմանն ու մոլդավական և ուկրաինական ժողովուրդների միջև պատմական սերտ կապերի հաստատմանը, ակտիվորեն մասնակցում էին ինչպես մոլդավական, այնպես էլ արևմտաուկրաինական քաղաքների հայ վաճառականները։

Փրկվելով օտար զավթիչների ծանր լծից, հայկարավոր հայեր իրենց հայրենիքից գաղթեցին տարբեր երկրներ[2], այդ թվում նաև Մոլդավիա և Ուկրաինա։

Մոլդավիայի տերիտորիայում հայ ընտանիքների առանձին խմբեր բնակություն հաստատեցին այն ժամանակ, երբ այնտեղ պետություն դեռ չէր կազմավորվել[3]։ Հայերի մի մասը գաղթեց անմիջականորեն Հայաստանից, մի այլ մասը՝ Ղրիմից[4], որտեղ նրանք XII—XIII դարերում կազմում էին բնակչության մի զգալի մասը[5]։

---

1 *Տե՛ս* Н. А. Мохов, Молдавия эпохи феодализма, Кишинев, 1964, *էջ 128—132, 237—240։* «История Молдавской ССР», т. I, Кишинев, 1965, *էջ 178—182։* «Очерки истории СССР, период феодализма XVII в.» под ред. Н. Н. Новосельского и А. В. Устюгова, М., 1955, *էջ 713—732։* Е. М. Подградская, Торговые связи Молдавии со Львовом в XVI—XVII веках, автореферат диссертации, Кишинев, 1965.

2 В. К. Восканян, Древняя Русь и Украина в судьбах армян, сборник материалов «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, *էջ 68—71։*

3 Vlad Banaţeanu, Armenii în istoria şi în viaţa Romineasca, Buc., 1938, *էջ 10—13։* Л. С. Берг, Население Бессарабии, этнографический состав и численность, Петроград, 1923, *էջ 36։*

4 Vlad Banaţeanu, *Նշվ. աշխ., էջ 12—17։*

5 В. К. Восканян, *Նշվ. աշխ., էջ 68։*

Հայ գաղթականության հոսանքը Մոլդավիա հատկապես ուժեղացավ այն ժամանակ, երբ այնտեղ պետություն կազմավորվեց։ Մոլդավական մի շարք գոսպոդարներ, տեսնելով լեհական այն քաղաքների տնտեսական վերելքը, որտեղ հայկական գաղթօջախներ կային, ձգտում էին հայերին մշտապես բնակեցնել Մոլդավիայում։ Այսպես, օրինակ, Ալեքսանդր Դոբրին 1407 թ. առաջարկեց նվազեցնել հարկերի գանձումը հայ վաճառականներից, եթե նրանք բնակություն հաստատեն մոլդավական Սուչավա, Սերետ և Չերնովցի քաղաքներում[6]։ Հենց այդ ժամանակ Լեհաստանից Սուչավա գաղթեց մոտ 700 հայ ընտանիք[7]։ Նույն այդ մոլդավական գոսպոդարը 1418 թ. նպաստեց 3000 հայ ընտանիքների վերաբնակեցմանը Սուչավա, Բելգորոդ, Բոտոշանի, Դորոգոյ, Խոտին, Վասլույ, Գալաց քաղաքներում[8]։ Թուրքերի կողմից Կաֆան գավթելուց հետո (1475 թ.) Մոլդավիա ուղղվեց ղրիմահայերի մի նոր հոսանք[9]։

Այսպիսով, XIV—XV դարերի ընթացքում հայերը բնակություն հաստատեցին Մոլդավիայի շատ քաղաքներում։ XV դ. նրանց զգալի մասը ապրում էր Բելգորոդում։ Եվ գա միանգամայն բնական է, եթե հաշվի առնենք այդ քաղաքի դերը տվյալ ժամանակաշրջանի Մոլդավիայի տնտեսական կյանքում։ Թուրքիայում ֆրանսիական դեսպան Ջիլբերտ գը Լաննուան, որը 1421 թ. եղել էր Բելգորոդում, հետագայում իր հուշագրություններում նշում էր, որ այդ քաղաքում կար հայկական գաղութ, որն ուներ իր եկեղեցին[10]։ Ֆրանսիացի ճանապարհորդ Վ. Վավրինը, որը Մոլդավիայում եղել էր 1445 թ., ուշադրություն էր դարձրել այն բանի վրա, որ Բելգորոդում գտնվում էին շատ նավեր, որոնք պատկանում էին հայերին[11]։ Իսկ 1460 թ. այս քաղաքը դարձավ հայ եպիսկոպոսի նստավայրը[12]։

XV դ. հայ գաղթավայրեր կային Բոտոշանիում, Սուչավայում և Յասսիում։ XIV դ. կեսերին Բոտոշանիի հայերն ունեին եկեղեցի[13]։ 1401 թ. Սուչավայում հիմնվեց հայ եպիսկոպոսություն[14]։ Սուչավայի հայ բնակիչները ունեին դատական գործերի գծով իրենց շոլտուզը[15]։ Այն փաստը, որ դեռ XIV դարի վերջին Յասսիում կար հայոց եկեղեցի, անուղղակիորեն ապացուցում է, որ այստեղ գոյություն ուներ բավականին խոշոր հայ գաղութ[16]։ Շատ հայ ընտանիքներ ապրում էին նաև Խոտինում։ Այս քաղաքը 1418 թ. հիշատակվում է աղբյուրներում որպես հայ գաղթականների կենտրոն[17]։ Ոչ այնքան ստույգ տվյալների համաձայն, XIV դ. վերջում Ռոման քաղաքում կային մոտ 500 հայ տներ[18]։ XV դ. զգալի քանակությամբ հայ ընտանիքներ ապրում էին մոլդավական Սերետ[19] և Կիլիա[20] քաղաքներում։ Մենք չունենք ճշգրիտ տվյալներ XV դ. մոլդավա-

---

[6] Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 18։

[7] Նույն տեղում։

[8] Xenopol, Istoria Romîniei, v. II, Iaşi, 1889, էջ 251; B. P. Haşdeu, Etymologicum magnum, II, էջ 1697; H. Dj. Siruni, Ţara voevodului Ştefan, Buc., 1941, էջ 3. Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 19։

[9] Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 18. N. Iorga, Istoria comerţului Romînesc, v. I, Buc., 1937, էջ 120.

[10] Arhiva istoricä a Romîniei, v. I, partea 1, էջ 130; Of Voyages et ambassades de Messire Guillebert de Lannoy en 1309—1450, Mons, 1840.

[11] N. Iorga, Studii istorice asupra Chiliei si Cetăţii Albe, Buc., 1899, էջ 192; Of Wawrin: Anch. Croniques, ed. Hardy, V, էջ 65; N. Iorga, Istoria Romînilor prin calätori, v. I, Buc., 1928, էջ 70.

[12] Alişan, Geografia Politica, Camenija, էջ 225. H. Dj. Siruni, նշվ. աշխ., էջ 14։

[13] N. Sutu, Notions statistiques sur la Moldavie, Iassy, 1849; V. Banateanu, նշվ. աշխ., էջ 26; N. Iorga, Istoria Romînilor prin calätori, v. I, էջ 234.

[14] P. Panaitescu, Hrisovul lui Alexandru cel Bun. Episcopia armeana din Suceava, Buc., 1935, էջ 4.

[15] Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 22։

[16] Նույն տեղում, էջ 27։

[17] N. Sutu, Notions statistiques sur la Moldavie, Iassy, 1849; Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 26; N. Iorga, Istoria Romînilor prin calatori, v. I, էջ 234; B. P. Haşdeu, Etymologicum Magnum, II, էջ 1697; H. Dj. Siruni, նշվ. աշխ., էջ 5;

[18] Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 30։

[19] N. Iorga, Studii si documente, v. XXIII, էջ 300, № XXVI.

[20] N. Iorga, Istoria comerţului romînesc, v. I, էջ 97.

կան քաղաքներում հայերի քանակի վերաբերյալ։ Սակայն դատելով այն բանից, որ հայերն այնտեղ օգտվում էին իրենց իրավունքից, ունեին իրենց եկեղեցիները և եպիսկոպոսական նստավայրը, կարելի է եզրակացնել, որ նրանք կազմում էին մոլդավական քաղաքների բնակչության բավական զգալի մասը։

Բազմազան էր վերաբնակեցվածների տնտեսական գործունեությունը Մոլդավիայում։ Ղրիմի, Ուկրաինայի, Լեհաստանի իրենց հայրենակիցների նման[21] նրանք զբաղվում էին արհեստներով առևտրով, երկրագործությամբ, անասնապահությամբ և խաղողագործությամբ, դրանով իսկ նպաստելով իրենց նոր հայրենիքի տնտեսության զարգացմանը։

Անասնապահությամբ զբաղվող հայերը աճեցնում էին անասունների, գլխավորապես ձիերի, լավագույն ցեղեր[22]։ Հայ արհեստավորների մի մասը զբաղվում էր կաշվի մշակությամբ և կաշվեղենի արտադրությամբ։ Այսպես, 1476 թ. մի փաստաթղթի համաձայն Լվովի հետ առևտրական կապեր պահպանող հայ վաճառականների շարքում հիշատակվում են սուչավացի կաշեգործներ Սարգսի և Յակուրի անունները[23]։ Հետևաբար, մի շարք հայ արհեստավորներ զբաղվում էին թե՛ ապրանք արտադրելով և թե՛ դրանք իրացնելով։ Հայ վաճառականներն ու արհեստավորները այդ ժամանակ կազմում էին մոլդավական քաղաքների բնակչության մի զգալի մասը[24]։

XV դարում Մոլդավիան և Լվովը կարևորագույն օղակներն էին այն առևտրական ճանապարհի, որի միջոցով արևմտաեվրոպական երկրներն էին ուղարկվում մեծ քանակությամբ արևելյան ապրանքներ։ Սույն այդ ճանապարհով արևմուտքից դեպի արևելյան շուկաներն էին փոխադրվում Արևմտյան Եվրոպայի արհեստագործության արտադրանքները։ Մոլդավիայի և Լվովի միջև կատարվող տարանցիկ առևտրում էական դեր էին խաղում ինչպես արևմտաուկրաինական, այնպես էլ մոլդավական քաղաքների հայ վաճառականները։ Այսպես, XV դ. կեսերին Լվովի հետ արևելյան ապրանքների ակտիվ առևտուր էին անում սուչավացի հայեր Սահակն ու Ագոպսան[25]։ 1462—1472 թթ. Լվովում առևտրական գործառություններ էր կատարում նաև սուչավացի հայ Կոկշան[26]։ 1472 թ. Սուչավայի հայերի մի խումբ Լվովի քաղաքացիություն ընդունեց[27], որը զգալիորեն թեթևացրեց այդ քաղաքում նրանց առևտուր անելու գործը։ XV դ. երկրորդ կեսին Լվովի շուկայում լայնորեն հայտնի էին սեբեստցի հայ վաճառականներ Շիլկոն և Գրիգորին[28]։

Կան մեծ թվով փաստաթղթեր, որոնք վկայում են Լվովի և արևմտաուկրաինական այլ քաղաքների հետ բելգորոդցի հայ վաճառականների առևտրի մասին[29]։

XV դարի Լվովի և արևմտաուկրաինական այլ քաղաքների հայ վաճառականները զգալի առևտուր էին անում մոլդավական հողերում։ Այդ պատճառով էլ պատահական չէ, որ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Զամոստիեում և այլ քաղաքներում արևելյան ապրանքները, որոնք տարանցիկ ճանապարհներով փոխադրվում էին Մոլդավիայի վրայով, կամ գնվում էին հայ վաճառականների կողմից մոլդավական քաղաքներում, կոչվում էին «հայկական ապրանքներ»[30]։

XVI—XVII դդ. փոփոխված տնտեսական պայմանների պատճառով հայերը, չթողնելով արևելյան ապրանքների և արևմտաեվրոպական մահուդի առևտուրը, ընդգրկվում են Մոլդավիայի և

---

21 В. К. Восканян, նշվ. աշխ., էջ 68, 72. В. В. Грабовецкий, Армянские поселения на западноукраинских землях, сб. материалов «Ист. связи и дружба украинского и армянского народов», էջ 96—99; նույնի Армянская колония в Снятине, сб. материалов второй украинско-армянской научной сессии, Киев, 1965, էջ 141—142; Н. К. Кривошеев, Роль львовской армянской колонии в развитии торговли на западноукраинских землях в I пол. XVII в., էջ 101—104.

22 Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 22—23.

23 N. Iorga, Studii şi documente, v. XXIII, էջ 310, № LVII.

24 Н. А. Мохов, Молдавия эпохи феодализма, էջ 130.

25 N. Iorga, Studii şi documente, v. XXIII, էջ 297, doc. № XV, էջ 310, № LVII, էջ 311, № LXII.

26 Նույն տեղում, v. XXIII, էջ 295, № IX, էջ 296, № XIV, էջ 306; № XLVI, էջ 307, № XLVIII, էջ 308—9, № LI—II.

27 N. Iorga, Studii şi doc., v. XXIII, էջ 300, d. № XXVI.

28 սույն տեղում.

29 N. Iorga, Studii istorice asupra Chiliei şi Cetăţii Albe, Buc., 1899, Apendice şi documente, էջ 282—296.

30 В. В. Грабовецкий, Армянские поселения на западноукраинских землях, էջ 96.

արևմտաուկրաինական քաղաքների միջև կատարվող առևտրափոխանակության մեջ, վաճառելով գերազանցապես տեղական արտադրության ապրանքներ։

Մոլդավիայի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերը դրական դեր են խաղացել Մոլդավիայի և նրա հյուսիսային հարևանի միջև պատմական կապերի ամրապնդման և զարգացման գործում։ Ներկա հաղորդման մեջ մենք նպատակ չենք դնում բոլոր տեսակետներից մանրակրկիտ լուսաբանելու մոլդավահայերի գործունեության ոլորտները, բայց կփորձենք հակիրճ կերպով, եղած արձանագրական նյութերի հիման վրա քննարկել XVI—XVII դդ. Մոլդավիայի ու Լվովի և արևմտուկրաինական մյուս քաղաքների միջև կատարված խոշոր առևտրափոխանակության ասպարեզում հայ վաճառականների մասնակցության հարցը։

Ինչպես նշվեց, քննարկվող ժամանակաշրջանում հայկական ստվար բնակչություն ունեցող առավել խոշոր քաղաքներից մեկը Սուչավան էր։ 1608 թ. այս քաղաքն այցելած Սիմեոն Լեհացու տվյալների համաձայն «քաղաքի հայոց գաղութը հաշվվում էր 300—400 ընտանիք»[31]։ Ըստ կաթոլիկ եկեղեցու գործիչ Մ. Բանդինիի, որը Սուչավայում եղել էր ավելի ուշ՝ 1640 թ., քաղաքում ապրում էին «20 հազար մոլդավացի, 3 հազար հայ՝ երեխաներով հանդերձ. մոլդավացիները քաղաքում ունեին 17 եկեղեցի, իսկ հայերը 4»[32]։ Սթե նույնիսկ հաշվի առնենք քաղաքի հայկական բնակչության վերաբերյալ բերված տվյալների հնարավոր անճշտությունը, այնուամենայնիվ այդ տեղեկությունները պերճախոս կերպով վկայում են այն մասին, որ XVI—XVII դդ. Սուչավայում կար բավականաչափ մեծ բնակչություն։ Քաղաքում կային մի շարք փողոցներ, որտեղ բնակվում էին հայեր և այդ պատճառով էլ կոչվում էին հայկական։ Այսպես մոլդավական գոսպոդար Ե. Մոգիլայի 1597 թ. հունվարի 22-ի հրամանագրում նշվում է, որ սուչավացի հայ խոշոր վաճառական Բոգդանը գոսպոդարից ստացել է մի «... տուն Մեծ հայկական փողոցում»[33]։

Ինչպես Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում, նույնպես և Սուչավայում հայոց գաղութը XVI—XVII դդ. իրավական տեսակետից մի առանձին համայնք էր, որը ղեկավարվում էր հայոց իրավունքով։ Ինչպես երևում է Սուչավայի «վորնիկի» 1601 թ. հունիսի 24-ին Բիստրիցա ուղարկված նամակից, քաղաքում գոյություն ուներ «հայ շոլտուզ իր խորհրդականներով»[34]։ Հայ շոլտուզի մասին հիշատակություններ են հանդիպում նաև ավելի ուշ շրջանի փաստաթղթերում։ Այսպես, օրինակ, առքի և վաճառքի վերաբերյալ մի արձանագրությունում, որ կազմված է 1670 թ. դեկտեմբերին, նշվում է, որ «Սուչավա քաղաքի հայ շոլտուզ Կիրիկան» վաճառում է խաղողի այգի[35]։ Սուչավայի հայերն ունեին նաև իրենց եկեղեցական կազմակերպությունը։

Սուչավայի հայ բնակիչները ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ էին։ Վերևում մեր նշած 1597 թ. հունվարի 22-ի գոսպոդարական հրամանագրից և այլ փաստաթղթերից երևում է, որ քաղաքի շատ հայ բնակիչներ ունեին խաղողի այգիներ, արոտավայրեր, լճակներ և այլն[36] և զբաղվում էին ոչ միայն առևտրով ու արհեստներով, այլև գյուղատնտեսությամբ։

Սուչավայի հայերից հայտնի են մի շարք ականավոր դիվանագետներ և թարգմանիչներ։ Այսպես, օրինակ, սուչավացի հայ Նիկոլայ Բայդուլովիչը հիանալի տիրապետում էր մի քանի արևելյան լեզուների, և 1567 թ. ընտրվեց Լվով քաղաքի թարգմանիչ[37]։ Բայց և այնպես այս քաղաքի հայ բնակիչների զգալի մասը հավանորեն զբաղվում էր առևտրով և արհեստներով։

XVI—XVII դդ. Մոլդավիայում մեծ զարգացում ապրեց կաշվի մշակումը, որի կարևորագույն կենտրոններից էին Յասսին և Սուչավան։ Վերջինս հատկապես լայն ճանաչում է գտնում

---

[31] М. О. Дарбинян, Симеон Лехаци о странах юго-восточной Европы, «Восточные источники» по истории народов юго-восточной и центральной Европы, М., 1964, էջ 254։

[32] V. A. Urechia, Codex Bandinus. An. Ac. Rom., seria II. v. XVI, Buc., 1895, էջ 249.

[33] N. Iorga, Studii şi documente, v. VI. էջ 636—637, d. XVI; E. Hurmuzaki, Documente, v. XI, էջ 318.

[34] E. Hurmuzaki, նշվ. աշխ., v. XV, partea 2, էջ 784, № MDCXII.

[35] N. Iorga. Studii si documente, v. VII, էջ 379, d. 14, № 2.

[36] Նույն տեղում, v. VI, էջ 637, d. XVI, Documente privind Istoria Rominiei, A. veacul XVI, v. III, էջ 78, A. veac. XVII, v. I, էջ 95—96.

[37] Cadok Baraçz, Żywoty stawnych armian w Polsce, Lwow, 1856, էջ 56—57.

«Սուչավայի հայտնի սեկիս» արտադրության շնորհիվ[38]։ Այդ արտադրանքը մեծ պահանջարկ էր գտնում արևմտաուկրաինական քաղաքներում։ Դրա հետևանքով էլ բնական է, որ կաշին և սեկը կարևորագույն տեղ էին գրավում Մոլդավիայի արտահանության այն ճյուղում, որն ընդգրկում էր արհեստագործական ապրանքները։ XVI—XVII դդ. ընթացքում սուչավացի հայազգի արհեստավորների և վաճառականների զգալի մասը զբաղվում էր կաշվի և սեկի առևտրով, այդ արժեքավոր ապրանքներով մատակարարելով Լվովը և արևմտաուկրաինական այլ քաղաքները։ Լվովում լայնորեն զարգացած էր արհեստագործական այն ձեռնարկությունների ցանցը, որոնք մասնագիտացել էին կաշվե զանազան առարկաների արտադրության մեջ, այն է՝ կոշիկ, կապարճ, ուղեպարկեր, թամբ և ձիերի կաշվե այլ սարքեր և այլն[39]։ Բացի այդ Լվովի շուկա գալիս էին Ռեչ Պոսպոլիտայի այլ քաղաքներից և արտասահմանից ժամանած վաճառականներ ևս, որոնք տեղում գնում էին մեծ քանակությամբ կաշի, սեկ և մորթիներ[40]։ Այսպես., 1584 թ. սուչավացի հայ Պոպովիչը Սնյատինում վաճառում էր զանազան ապրանքներ, որոնց թվում նաև «150 սեկ»[41]։ 1599 թ. սուչավացի Խաչերիսը Լվովին մատակարարում էր սեկի կաշի[42]։ Լվովի քաղաքային խորհրդի 1621 թ. արձանագրություններից մեկից իմանում ենք, որ այդ ժամանակ Լվովի վաճառականների մի խումբ գնել է «սուչավացի վեց հայ վաճառականներից 1828 զլոտիի և 24 գրոշի սեկ»[43]։ Լվովում 1631 թ. կայացած դատաքննության ժամանակ լվովցի հայտնի վաճառական Ա. Ստրելեցկին խոստովանում էր, որ սուչավացի հայերին գնած սեկի դիմաց պարտք է մնացել 1800 զլոտի[44]։ Լվով քաղաքի վոյտական դատարանի 1650 թ. մի արձանագրությունից երևում է, որ 1649 թ. հոկտեմբերի 8-ին Սնյատինում պայմանագիր է կնքվել լվովցի վաճառական Ստադնիցկու և սուչավացի հայ Թորոս Ախանտովիչի միջև, որի համաձայն վերջինս պարտավորվել է առաջինին մատակարարել «700 եզան և հորթի կաշի՝ Լվովի տոնավաճառից մեկ շաբաթ առաջ»[45]։ Մեր բերած տվյալները խոսում են սեկի կաշվի առևտրում սուչավացի հայերի զգալի դերի մասին։

Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը թույլ չեն տալիս որոշակիորեն եզրակացնելու, թե որ դեպքում են սեկն ու կաշին վաճառել իրենք արհեստավորները և որ դեպքում՝ վաճառականները։ Բայց հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի արհեստագործության և առևտրի զարգացման մակարդակը, կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ սուչավացի հայերի մի մասը զբաղվում էր ոչ միայն վաճառքով, այլև կաշվի մշակմամբ և սեկի արտադրությամբ։ Չէ՞ որ հայերը դեռ հնագույն ժամանակներից հայտնի են եղել որպես կաշեգործ և սեկագործ վարպետներ։ Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության վերաբերյալ հետազոտությունները ապացուցում են, որ հենց հայ սեկագործ վարպետներն են եղել այդ արհեստի հիմնադիրներն այստեղ[46]։ Հայերը նույն շրջանում հռչակված էին Եվրոպայում որպես ամենալավ սեկ պատրաստողներ[47]։ Լվովում նույնպես ամենահայտնի կաշեգործները հայերն էին[48]։ Կաշե-

---

38 См. О. М. Подградська, про вивіз ремисничих виробів із Молдавії, на львівський ринок у XVI—XVII ст., «Український історичний журнал», № 1, січень 1965, էջ 115—117։

39 С. Г. Білецький, Развиток ремесла і промислів у Львові в середине XVII ст., з історії західноукраїнських земель, т. II, Київ, 1957, էջ 21։

40 ЦГИА УССР, г. Львов. ф. 52, оп. 3, Акты войтовского суда, кн. 406, թ. 102, 106, кн. 398, թ. 1676, 1962 և հտ.։

41 Там же, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 246, թ. 1584.

42 N. Iorga, Relaţiile comerciale ale Ţerilor noastre cu Lembergul, Regeste şi documente din archivele oraşului Lemberg, partea I, Buc.. 1900, էջ 113.

43 ЦГИА УССР, г. Львов, Акты городского совета, ф. 52, оп. 3, кн. 36, թ. 131։

44 W. Lozinski, Patrycyat i mieszczanstwo lwowskie w XV i XVII wieku, Lwów, 1902, էջ 331.

45 ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты войтовского суда, кн. 401, թ. 1321—1322.

46 Я. П. Кись, Участие армян в развитии ремесла г. Львова в XV—XVII вв., сб. материалов «Ист. связи и дружба украинского и армянского народов», Киев, 1965, էջ 138։ Н. К. Кривонос, Армянская колония во Львове в первой половине XVII в., автореферат кандидатской диссертации, Ереван, 1965, էջ 6։

47 Я. П. Кись, Նշվ. աշխ., էջ 137։

48 Նույն տեղում։

գործական արտադրությամբ մեծ հռչակ էին վայելում նաև Սնյատինի և արևմտաուկրաինական մյուս քաղաքների հայերը[49]։ Մեզ ամենևին պատահական չէ թվում այն փաստը, որ XV դ. Մոլդավիայի պատմությանը վերաբերող սակավաթիվ փաստաթղթերում հիշատակվում են սուչավացի հայ կաշեգործներ, որոնք, ըստ երևույթին, որոշակի դեր են խաղացել Մոլդավիայի, մասնավորապես Սուչավայի, կաշեգործական արտադրության զարգացման գործում։ Իսկ եթե Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում, ուր ապրում էին ոչ քիչ թվով լավագույն սեկագործ և կաշեգործ վարպետներ, այդ ժամանակ Սուչավայի սեկը մեծ պահանջարկ էր գտնում, ապա դա ևս այն բանի ապացույցն է, որ Սուչավայի սեկը իր որակով չէր զիջում այնտեղի լավագույն նմուշներին և որ դրա արտադրությամբ զբաղվում էին այնպիսի վարպետներ, որոնց կաշի մշակելու արվեստը իր մեջ ամբարել էր նախորդ շատ սերունդների հմտությունը։

Լվովցի հայ վաճառականները Սուչավայի որակյալ սեկը վաճառում էին երկրի տարբեր քաղաքներում։ Այսպես, օրինակ, 1633 թ. լվովահայ Բեդրոս Լուսիկովիչը և Նիկոլայ Օվանիշովիչը Յազլովեցում դնեցին 1700 կաշի, որոնց մեջ կային «200 սուչավական սեկեր», և տարան Յարոսլավ քաղաքում վաճառելու[50]։ Արևմտաուկրաինական տարբեր քաղաքներում մոլդավական (հատկապես սուչավական) և թուրքական սեկի մանրաձախ առևտուր էր անում լվովցի հայ վաճառական Դաբրիել Մախիցիովիչը[51]։

Սեկից բացի Սուչավայի հայերը Լվով էին ներմուծում նաև մոլդավական և հունական գինիներ, համեմունքներ և արևելյան կերպասներ։ Այսպես, 1565 թ. սուչավացի հայ Յազարիկը մետաքս էր տանում Լվով[52]։ 1578—1579 թթ. Լվովի մաքսային մատյաններում գրանցված է Սուչավայի հայ վաճառականների կողմից «մալվազիա» գինու ներմուծում»[53]։ 1584 թ. մի փաստաթղթից իմանում ենք, որ սուչավացի հայ Իոսիֆ Պոպովիչը Սնյատինում սեկ և արևելյան ապրանքներ է վաճառել[54]։

Ինչպես երևում է այն ժամանակվա փաստաթղթերից, սուչավացի հայ վաճառականները մոլդավական և արևելյան ապրանքների առևտուր էին անում ոչ միայն Լվովում, այլև Կամենեց-Պոդոլսկում, Յարոսլավում, Սնյատինում, Յազլովեցում, Զամոստիեում և այլ քաղաքներում[55]։

Սուչավայի հայերը Լվովից Մոլդավիա էին տանում գլխավորապես երկաթ, զանազան տեսակի մահուդներ, բամբակյա գործվածքներ և այլ կտորներ։ Լվովի մաքսատան 1578—1580 թթ. պահպանված մատյաններից երևում է, որ այդ ժամանակ Սուչավայի հայերը Լվովից Մոլդավիա մեծ քանակությամբ երկաթ էին փոխադրում[56]։ Նույն այդ մատյաններում գրանցված է, որ սուչավացի հայերը Լվովից արտահանում էին զանազան մահուդներ, բամբակե գործվածքներ և այլ ապրանքներ[57]։ Լվովում սուչավացի հայ վաճառականների կողմից երկաթ դնելու փաստեր արձանագրված են նաև հետագա տարիների մաքսային մատյաններում[58]։

Բերված փաստացի տվյալներից կարելի է եզրակացնել, որ Սուչավայի հայ բնակչությունը աչքի ընկնող դեր էր խաղում քաղաքի տնտեսական կյանքում, իսկ սուչավացի հայ վաճառականները նպաստում էին արևմտաուկրաինական քաղաքների հետ երկրի ապրանքափոխանակության ընդլայնմանը այնպիսի կարևորագույն ապրանքների գծով, ինչպիսիք էին երկաթը և սեկը։

---

[49] В. В. Грабовецкий. Армянская колония в Снятине, сб. материалов «Исторические связи и дружба украинского и армянского народов», էջ 141։

[50] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты армянского суда, кн. 523, թ. 1654—1655։

[51] Նույն տեղում, кн. 531, թ. 1794։

[52] N. Iorga, Relatiile comerciale..., էջ 44.

[53] R. Rybarski, Handel i polityka handlowa Polski w XVI stuleciu, t. II, Poznań, 1928, էջ 257.

[54] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты городского суда, кн. 246, թ. 1086.

[55] ЦГИА УССР, г. Львов, Акты войтовского суда, ф. 52, оп. 3, кн. 390, թ. 636—637. кн. 399, թ.1315, նույն տեղում, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 246, թ. 1086.

[56] R. Rybarski, Նշվ. աշխ., հատ. II, էջ 255։

[57] Նույն տեղում։

[58] Նույն տեղում, էջ 137։

Քննարկվող շրջանում հայկական մի խոշոր բնակավայր կար նաև Յասսիում։ Ստեֆան III Մեծի կառավարման շրջանում Յասսիում բնակվում էր մոտ 600 հայ ընտանիք[59]։ Իտալացի կաթոլիկ քարոզիչ Մանչինելլին, որը 1580 թ. եղել էր Յասսիում, հաղորդում է, որ քաղաքում ապրում են շատ հայեր[60]։ Վերևում հիշատակված կաթոլիկ եկեղեցու գործիչ Բանդինին 1640 թ. լինելով Յասսիում, հետագայում նշում էր, որ քաղաքի հիմնական բնակչության՝ մոլդավացիների հետ միասին «այստեղ ապրում են հունգարացիներ, հույներ...» և այլ ազգություններ[61]։

XVI դ. Յասսիում հայոց դատարանի գոյության վերաբերյալ առաջին փաստական վկայությունը Կամենեց-Պոդոլսկի հայոց դատարանի մատյաններում 1574 թ. հուլիսի 13-ի արձանագրությունն է[62]։ Ավելի ուշ շրջանի փաստաթղթերում նույնպես հիշատակություններ են հանդիպում դատական գործերի գծով հայ շոլտուզների մասին[63]։ Յասսիի հայերն ունեին իրենց եկեղեցական կազմակերպությունը։ Ինչպես հիշատակում է Մ. Բանդինին, 1640 թ. այս քաղաքում կար երկու հայկական եկեղեցի[64]։ XVI—XVII դդ. Սուչավան և Յասսին փոփոխակիորեն դառնում են հայ եպիսկոպոսի նստավայրը[65]։

Բազմապիսի էին Յասսիի հայերի զբաղմունքները։ Նրանց մեջ կային վաճառականներ, արհեստավորներ, ոսկերիչներ[66] և այլն։ Յասսիի հայերը հռչակված էին որպես հմուտ դեղագործներ, որոնք պատրաստում էին զանազան դեղեր և անուշահոտ քսուկներ[67]։

XVI—XVII դդ. մոլդավական պետության մայրաքաղաք Յասսին առևտրի խոշոր կենտրոնն էր և, ինչպես արդեն նշել ենք, կաշեգործական բավականաչափ զարգացած արտադրության քաղաք։ Այդ պատճառով էլ բնական է, որ կաշին և սեկը աչքի ընկնող տեղ էին գրավում Յասսիի հայերի առևտրում և այդ ապրանքները այստեղ գնում էին նաև արևմտաուկրաինական քաղաքների հայ վաճառականները։ Այսպես, 1621 թ. Զամոստիե քաղաքից հայ վաճառական Վարդերիսը Յասսիում գնեց «1200 կամ 1300 սեկի կաշի»[68]։ Մի այլ հայ վաճառական, լվովցի Զախարիաշ Եմիրովիչը 1668 թ. վոյտական դատարանում հայտնեց, որ «ինքը պարոն Դոմինիկի հետ միասին Յասսիում գնել է սեկ, որը հետո բաժանել են իրար մեջ»[69]։

Յասսիի հայ վաճառականները Լվով և արևմտաուկրաինական այլ քաղաքներ էին տանում նաև արևելյան կերպասներ։ 1588 թ. մի փաստաթուղթ վկայում է, որ Յասսի քաղաքի հայ բնակիչ Վարդիկը այդ ժամանակ Լվովում արևելյան կերպասներ էր վաճառում[70]։ 1591 թ. Լվովում և Կամենեց-Պոդոլսկում արևելյան ապրանքների առևտուր էր անում Յասսի քաղաքի հայ բնակիչ Մուրադը[71]։

Իսկ Լվովում Յասսիի հայ վաճառականները գնում էին գլխավորապես արհեստագործական արտադրանք՝ զանազան որակի մահուդներ, ոսկերչական իրեր և թանկարժեք քարեր։ Այսպես, 1614 թ. ապրիլի 27-ին Յասսիում կնքվեց պայմանագիր մի կողմից վալախացի մաքսային աշխատող Կանդիմ Վրանաշի և, մյուս կողմից, Լվովի հայ վաճառական Անդրեյ Թորոսովիչի ներկայացուցչի միջև։ Վերջինս պարտավորվեց Վրանաշին մատակարարել 280 թոփ զանազան որա-

---

[59] N. Suţu, Notions atatistiques sur la Moldavie, Iassy, 1849, V. Banaţeanu *Նշվ. աշխ.*, էջ 29։

[60] E. Hurmuzaki, Documente, v. XI, էջ 116, № CXCII,

[61] Codex Bandinus, էջ 257։

[62] В. Р. Григорян, Об актовых книгах армянского суда г. Каменец-Подольска (XVI—XVII вв.). «Восточные источники по истории народов юго-восточной и центральной Европы». М., 1964, էջ 290։

[63] E. Hurmuzaki, Documente, v. XV, էջ 257, № CCCCLXX, էջ 727—8, № MCCCCXXXV.

[64] Codex Bandinus, էջ 250։

[65] Vlad Banaţeanu, *Նշվ. աշխ.*, էջ 24։

[66] N. Bogdan, Oraşul Iaşi, 1913, էջ 341։

[67] E. Hurmuzaki, *Նշվ. աշխ.*, v. XI, էջ 115—116, № CXCII, v. XV, էջ 816, № MDCLIX.

[68] ЦГИА УССР, г. Львов, Акты войтовского суда, ф. 52, оп. 3, кн. 395, թ. 666—667։

[69] *Նույն տեղում*, кн. 406, թ. 102—106։

[70] N. Iorga, Relaţiile comerciale..., էջ 88.

[71] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты войтовского суда, кн. 385, թ. 759—760.

կի մահուդ[72], Լվովից գյուղատնտեսական գործիքների մատակարարման մասին պայմանագրեր էր կնքում Յասսիի հայ բնակիչ Գարգաշովիչը։ Այսպես, 1652 թ. նա այդպիսի մի պայմանագիր կնքեց Լվովցի Իսահակ Լազարովիչի հետ, որով վերջինս պարտավորվում էր Սնյատինի տոնավաճառի համար Գարգաշովիչին մատակարարել երեք «ֆասա» գերանդի[73]։ Լվովահայ վաճառականները Յասսիում ունեին իրենց առևտրական ներկայացուցիչները, որոնք զանազան առևտրական գործարքներ էին կնքում տեղի վաճառականների հետ։ Լվովի հայոց դատարանի 1594 թ. մի արձանագրությունից երևում է, որ Լվովցի հայ Դավիթ Սերեբկովիչը համաքաղաքացիներ Մուրադ Նորբեգի և Սերպեր Նուրիդիանովիչի հանձնարարությամբ Յասսիում և Մոլդավական այլ քաղաքներում առևտուր էր անում[74]։ 1594 թ. նա Մոլդավիա, մասնավորապես Յասսի բերեց մեծ քանակությամբ «մահուդ, մարգարիտներ, արծաթե գավաթներ և այլ ապրանքներ»[75]։ Իսկ Յասսիում նա գնեց կաշի և մետաքս[76]։

Արևմտաուկրաինական քաղաքների հետ Յասսիի հայ վաճառականների ընդարձակ կապերի մասին են վկայում բազմաթիվ պարտամուրհակները։ 1576 թ. կազմված մի պարտավորագրի համաձայն, Յասսիի հայ բնակիչ Դրագիչը գործարար կապեր էր պահպանում Կամենեց-Պոդոլսկի հայ վաճառականների հետ[77]։ 1598 թ. լվովահայ վաճառական Նորբերգ Պոպովիչը առևտրական գործարքներ էր կատարում Յասսիի իր հայրենակիցներ Խաբարուկի և Նիկոլոնի հետ[78]։ Լվովցի վաճառական Ֆրեդերիկ Պենսի 1586 թ. կազմած վարկատուների և պարտատերերի ցուցակում նշված են նաև հայ վաճառականներ Ջադիկը Յասսի քաղաքից, Թողորը՝ Սուչավայից և ուրիշներ[79]։

Մեր բերած փաստական տվյալներից երևում է, որ Յասսիի հայ բնակչությունը նպաստում էր քաղաքի տնտեսության և առևտրի զարգացմանը և արևմտաուկրաինական քաղաքների հետ նրա տնտեսական կապերի ամրապնդմանը։

XVI—XVII դդ. հայեր էին ապրում նաև Բոտոշանի քաղաքում։ Այս քաղաքի հայ վաճառականների զգալի մասը նշված ամբողջ ժամանակաշրջանում զբաղվում էր արևմտաուկրաինական քաղաքներին այնպիսի ավանդական ապրանք մատակարարելով, ինչպիսին ձուկն էր։ Լվովի վոյտական դատարանի 1574 թ. արձանագրություններից մեկը վկայում է, որ Լվովցի հայ Միկո Յակուրովիչը ձուկ գնեց բոտոշանցի հայերից[80]։ Նույն դատարանի 1623 թ. մի արձանագրությունից երևում է, որ Կամենեց-Պոդոլսկի բնակիչ Իվաշկո Լուկաշովիչը 3 «կուֆա» ձուկ է գնել բոտոշանցի հայ Նիկոլայ Նիգոլիից[81]։ 1633 թ. մի այլ փաստաթղթից իմանում ենք, որ բոտոշանցի հայ Իվան Թեոդորովիչը ձուկ է վաճառել Սնյատինի և Լվովի տոնավաճառներում[82]։ Վոյտական դատարանի 1646 թ. մի արձանագրության համաձայն Լվովցի վաճառական Իվաշկովիչը բոտոշանցի հայ վաճառական Դրագանից գնել է «երկուհարյուր քար ձուկ»[83]։ Սնյատինի, Կոլոմիի և ուկրաինական այլ քաղաքների տոնավաճառներում XVII դ. կեսերին լինում էին նաև բոտոշանցի հայ վաճառականներ[84]։ Բոտոշանցի հայերը Լվովում և արևմտաուկրաինական այլ քաղաքներում գնում էին հիմնականում մահուդ, գլխարկներ և զանազան արհեստագործական արտադրանք[85]։

---

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում, кн. 402, թ. 1998—2000, ֆասան=13—14 հատի, տե՛ս P. Pybarski, նշվ. աշխ., հատ. II, էջ 259։

74 ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты армянского суда, кн. 515, թ. 823—831, кн. 516, թ. 121—123, 278—281, 413—415.

75 Նույն տեղում, գ. 515, թ. 823—832։

76 Նույն տեղում, գ. 515, թ. 828—830։

77 N. Iorga, Studii şi documente, v. XXIII, էջ 355, d. CLXXXVII.

78 ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты армянского суда, кн. 517, թ. 135—141.

79 Նույն տեղում, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 227, թ. 488—489.

80 Նույն տեղում, Акты войтовского суда, кн. 381, թ. 917.

81 Նույն տեղում, кн. 396, թ. 75—77։ Կուֆան=2 տակառի, տե՛ս Я. Д. Исаевич, նշվ. աշխ., էջ 12։

82 Նույն տեղում, գ. 398, թ. 1630։

83 Նույն տեղում, գ. 401, թ. 1654։ Մեկ «քարը»—32 ֆունտի, Լվովի ֆունտը=405,224գ, տե՛ս Я. Д. Исаевич, նշվ. աշխ., էջ 12։

84 Նույն տեղում, Акты городского суда, кн. 243, թ. 1593—1601.

85 Նույն տեղում, Акты войтовского суда, кн. 380, թ. 108—110.

Քննարկվող ժամանակաշրջանում արևմտաուկրաինական քաղաքների հետ առևտրական կապեր էին պահպանում նաև մոլդավական ուրիշ քաղաքների հայ բնակիչներ. օրինակ Պոպան՝ Տիրգովիշտե քաղաքից[86], Վարդանը՝ Ռոմանից[87], Մատին՝ Խոտինից[88] և այլն։

Վերևում արդեն նշեցինք, որ մոլդավական մի շարք գոսպոդարներ իրենց քաղաքների տընտեսության զարգացմանը նպաստելու համար Մոլդավիա՝ մշտական բնակության էին հրավիրում հայ վաճառականների և արհեստավորների։ Բացի այդ, Ռեչ Պոսպոլիտայում բնակվող հայ վաճառականները մոլդավական իշխաններից երկրում ազատ առևտուր անելու երաշխիքներ էին ստանում։ Օրինակ, 1614 թ. մոլդավական գոսպոդար Ստեֆան Տոմշան Լվովի քաղաքային իշխանություններին ուղարկած իր ուղերձում խնդրում էր հայտնել տեղի վաճառականներին, այդ թվում նաև հայերին, «որ կարող են ապրանքներ վաճառելու և գնելու համար ազատ կերպով Մոլդավիա ճանապարհվել հետևյալ ուղիներով՝ դեպի Ձերնովցի, Խոտին և Սորոկա»[89]։ Ուղերձում այնուհետև նշվում էր, որ «հրաման է տրված այդ վայրերի պիրկալաբներին, որ նշված վաճառականները իրենց ապրանքներով երկրում երթևեկեն ազատորեն»[90]։

Մոլդավական գոսպոդարները և երկրի առևտրով զբաղվող պաշտոնատար այլ անձինք շատ հաճախ օգտվում էին հայ վաճառականների ծառայություններից։ Այսպես, 1564 թ. սուչավացի հայ վաճառական Դրագունը Լվով մեկնեց այն ապրանքներով, «որոնք իրեն վստահել էր մոլդավական գոսպոդարը»[91]։ Լվովի քաղաքային դատարանի 1595 թ. նիստերից մեկում վաճառական Ասվադուրը ցուցմունք էր տալիս այն մասին, որ հայազգի «Արևը խոշոր առևտուր էր անում մոլդավական գոսպոդար Արոնի հետ և վերջերս նրանից գնել է 3 հազար ասպրի վալախական ապրանքներ»[92]։

Ընդհանուր առմամբ նշելով հայերի գրական դերը Մոլդավիայի տնտեսության և առևտրի զարգացման գործում, չի կարելի համաձայնել ռումինական բուրժուական մի շարք պատմաբանների՝ փաստապես չհիմնավորված այն պնդումներին, թե իբր Մոլդավիայի, մասնավորապես Սուչավայի, Սերետի և այլ վայրերի ամբողջ առևտուրը կատարվում էր հայերի միջոցով։ Հիշյալ պատմաբանները դարձյալ անհիմն կերպով իդեալականացնում են հայ գաղթականների կյանքը, նշելով թե իբր նրանք բոլորը հարուստ և ունևոր մարդիկ էին[93]։ Մոլդավական քաղաքների հայ բնակչությունը, Լվովի և արևմտաուկրաինական մյուս քաղաքների հայ բնակիչների պես սոցիալ-տնտեսական տեսակետից միասնական ամբողջություն չէր կազմում[94]։ Այդ հայերի մեջ կային հարուստ վաճառականներ, որոնք ունեին խանութներ, տներ, հողակտորներ, խաղողի այգիներ և այլ սեփականություն։ Նրանց հակադրությունն էին իրենց իսկ աղքատ հայրենակիցները, որոնք հաճախ զուրկ էին նույնիսկ սնվելու միջոցներից։ Օրինակ, ինչպես երևում է Երեմիա Մոգիլայի 1597 թ. հունվարի 22-ի գոսպոդարական հրամանագրից, Սուչավայում ապրում էին այնպիսի հարուստ հայեր, ինչպիսին էր վաճառական Բոգդանը՝ տների, լճակների, արոտավայրերի և մի քանի խաղողի այգիների այդ սեփականատերը[95]։ Այլ փաստաթղթեր վկայում են Սուչավայի մի շարք հայերի աղքատ լինելու մասին։ Լվովի վոյտական դատարանի 1650 թ. արձանագրություններից մեկում կարելի է հանդիպել մի քանի վաճառականների ցուցմունքների, որոնք վերաբերում են սուչավացի վախճանված Հովհաննեսի ունեցվածքին։ Այսպես, Իվաշկո Քրիստոֆորովիչը հայտնում է, որ Հովհաննեսը «աղքատ էր, աշխատում էր որպես սայլապան և Սուչավայից վաճառականներ էր փոխադրում Սնյատին»[96]։ Մի այլ վկա, Յասսիի հայ բնակիչ Թորոսը վկայում էր, որ Հովհաննեսն այնքան աղքատ էր, որ երբ մահացավ, «նրան թաղեց իր փողով սուչավացի Անտո-

---

[86] E. Hurmuzaki, Documente, v. XV, էջ 59.

[87] N. Iorga, Studii şi documente, v. XXIII, էջ 349, № CLXIX.

[88] Ս. Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 291։

[89] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 1, Акты городского совета, д. 522, фасц. 281, док. 112.

[90] Նույն տեղում, д. 522, фасц. 281, док. 112.

[91] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты городского совета, кн. 14, թ. 296.

[92] Նույն տեղում, Акты городского суда, ф. 52, оп. 3, кн. 251, թ. 137—140.

[93] Տե՛ս Vlad Banaţeanu, նշվ. աշխ., էջ 12, 19, 22, 29։

[94] Н. К. Кривонос, նշվ. աշխ., էջ 101։

[95] N. Iorga, Studii şi documente, v. VI, էջ 637, d. XVI.

[96] ЦГИА УССР, г. Львов, ф. 52, оп. 3, Акты войтовского суда, кн. 402, թ. 1714.

նին»[97]։ Այս փաստերը խոսում են այն մասին, թե սոցիալական դրությամբ իրենից որպիսի հակադրություն էր ներկայացնում մոլդավական քաղաքների հայ բնակչությունը։

Ասվածը ի մի բերելով, կարող ենք նշել, որ Մոլդավիայի մի շարք քաղաքների հայ բնակչությունը դրական դեր է խաղացել երկրի տնտեսության զարգացման գործում, իսկ հայ վաճառականների առևտրական գործունեությունը նպաստել է հարևան պետությունների, մասնավորապես արևմտաուկրաինական հողերի հետ Մոլդավիայի պատմական կապերի ամրապնդմանը։

---

97 Նույն տեղում, KH. 402, թ. 1714։